

ԱՐՁԱԿԱՆ

Կ Ի Ս Ս Ը Ա Ր Ա Ք Ա Ք Ե Ր Թ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՎՈՒԹ ԶՈՐԵՐԵՍԱՐԹԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Rédaction du Journal
« ARCHALOUYCE »
Le Caire (Egypte)

ՏԷՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
Ե. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Դրամ պարտեմանից համակերպ
պետ է ուղղիկ եկեղեցիկ հասցիք

E. T. MARCOSIAN
Direct. - propr. du Journal Arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

ԱՋԳԱՐԱՐԹԻԹԻՆԸ
Կանխիկ վճարելի են:

ԹԻ 399

ԲԱՆ ՓՆՐԱՅ ՈՂՁ

ԶՈՐԵՐԵՍԱՐԹ

Ի Ե Մ Ա Ր Ա Ք Ե Ր Ա Ք Ա Ք

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Ազգ մը՝ առանց բարոյական
պատասխանատուութեան գի-
տակարանական մտած է:

Բարոյական պատասխանատուութեան
անդամութիւնը անտարբերութեան դերա-
դոյն վիճակն է: Ինչու որ անբար-
բոյացած բոլոր միջոցներէն աւելի յո-
ւանալի հանգամանք մը ունի անտարբերու-
թեան թանձր ուղորդը: Բարոյական գոյա-
ցումներն ալ որ անբարոյացած իրարմէն
մը այդ չըջափակին մէջ երբէք ազգիկ չը
կրնար: Մարտի օրը կը պակտի հոն, կեանս-
քը ինչպէս կ'ըլլայ, և մեծերութիւն կը
բարե յարածամ:

Այդ միջոցներէն մէջ վերածնող ժա-
հարոյ գործընկերը լաւեայն կը մայնէ,
կ'ապուեն հոգեկան կենդանութիւնը:
մարդկային յոյսերուն ու կորովին հիմերը
կը խորխորան, և աստիճանաբար կը բան-
դուին կամքն ու ընկու. կարողութիւնը:

Անհատ մը երբ, անբարոյացուցիչ
կեանքին նախապատրաստական աստիճան-
ներէն անցնելով, անտարբերութեան ուժա-
ցուցիչ շրջանին մէջ կը մտնէ, կը կորսնցնէ
իսպառ իր կրօնական, ընկերակցական ու ազ-
գային կենդանացու գոյացումները, և այլևս
չի կանգաւազուիր օրօք այն բոցաշունչ ու
հեշտալիք հաճոյքներովն որոնք տեսակա-
րար ու անհատական գոյութեան անեղծ
պահպանման համար, աստուծոյ առ չնորհ-
ուած թաքուն անհրաժեշտ կարողութեան մը
վառվառն արտայայտման են: Այս տես-
ակ կացութիւն մը անխտաբարութիւնն վը-
տանդաւոր ու տաղանապալիք է: Մեղքու-
թեան սղբալի վիճակն է այն՝ զոր օրդե-
զրոյ առջը, եթէ վերջին ճիգ մը ընկնելով
չի կենդանացնէ իր թմրած կարողութիւն-
ները, տակաւ և շարունակաբար պիտի խո-
թալի բարոյական գործիքեան խաղաղարին
արդեարաններուն մէջ: . . .

Կեանքի այս պարագան արգարե շատ
կակմայի է, որովհետեւ անբարութիւն հրան-
դութիւնն է հոգեւոր վիճակին: Կեանքի հո-
սուն ու խօսուն ընկնողքին մէջ անտարբեր
ըլլալը ո՛չ միայն ընդհանուր կեանքի յա-
րատե պահպանումն արգելը, այլ նաև ա-
նոր վեհազոյն նպատակին իրականութեան
գործնական ուղղութեանը մասին անպատ-
ուաբեր հանգամանք մըն է: Կեանքի կազ-
մակերպուած հրաշալի գրութեան անաս-
ման պարագային մէջ, կենդանութեան մա-
քոյ հոսանքաւորն ուղղիկներն աւելող
այս քաղցկեղանի ընդմիջումն ունեցող ակտու-
աւանակը չ'անցած, բարոյական կենդա-
նատու ճառագայթումներովը բուժել կա-
րելի է միայն:

Ազգ մը երբ այս վատախտարակ յատ-
կութիւններովն օժտուած անհատներու
ստուար բազմութիւն մը կը սնուցանէ իր

ցամբած ծոցին մէջ, անտարակոյս թոքախ-
տուար ազգ մըն է, կորստեան անբարութիւն
վիճակն լայն ու բաց կ'ալի մէջ իր աւալա-
զլոր գահավիժելու պատրաստ:
Ամէն մարդ, ո՛ր ազգին որ ալ վերա-
բերի, բարոյացուցիչ պատասխանատու է ազ-
գայնութեան կեանքին հիմնական բարե-
շքովն որ ուղղակի իր անհատական կեան-
քի բարեկիրթութեան կախումն ունի: Ազգերը
ընդհանուր մարդկութեան անհատներն են:
Մարդկութիւնը բարոյական կեանքին վիճ-
ու լազձալի մակարդակին վրայ իր ստրե-
քը զննելու երբէք կարող պիտի չ'ըլլայ:
մինչև հիմնապէս չի կորածնին անհատնե-
րը, և բոլոր ազգերը բարեշքուած անհատ-
ները չ'ըլլան ընդհանուր մարդկութեան:

Օրինակի համար, երբ ազգային մը,
կեանքի պատասխանատուութեան ճամբուն
վրայ, իր բարոյական սուրբ պարտաւորու-
թիւններն արձամարտելով, ըսէ մեղիդէն .
« Ինչի ինչ, եթէ արժանաւոր ազգային
պաշտօնական մարմին մը չ'ունինք . . . որո՞ն
հոգը, եթէ ազգային վարժարան ըլլալու
յարձուր չ'ենք ու կարող ասուցիչներ չ'կան
Ի՞նչի ինչ . . . իմ ինչուս պէտք, որ
ազգային նոր ու փառաւոր վարժարան մը
կառուցանելու համար կատարուելիք հան-
գանակութեան գործուն մէջ նախակարգ-
պետի դեր մը ունենամ . . . Անու մա՞յի,
եթէ Ռուսիոյ մէջ ազգային եկեղեցապատ-
կան կառուածները, ռուս կառավարութեան
կողմէն մատակարարուելու անակնիկ ու
բոցման կ'ենթարկուին, և այլն, » այդպիսին
բացարձակ վատախտութիւնն է, դժուար հոգի
մը, որուն ընդարձակացած գոյացումներն եթէ
ընդ միջի չի մտրակինք բարոյականութեան
ազգու խաղաղաներովն, և սրային վրայ
բոցուած մաշող խոր վերքերը շանուշիկներ
անընդհանր վերաբերութեանով խանդակալով,
պիտի կործանի, պիտի մեռնի ան բարոյա-
պէս: Այս տեսակ կեանքերը բարոյական
որտաճմանի տղաներն են: Աստուծոյ անզու-
մարար կը կրծ են միշտ կեանքի հաստաշ-
մատ ծառին մազմազակները, և չեն յոգե-
նար . . . Հայ ժողովուրդին իւրաքանչիւր
ղաւակը խորշակով այդ ստորին, անարգ-
կեանքէն, իր գոյութեան բուն ու միակնը
պատակը, ազնուացուցիչ բարոյական կեան-
քը գնահատել և յաւէտ այդ կեանքն ազ-
գիկ պարտական է: Մենք կատարելապէս
համոզուած ըլլալու ենք որ կեանքը իրա-
կան կուր մըն է, և մեղքէն ամէն մէկը,
ուղէ կամ ոչ, զինուոր մըն է կուռայ այդ
լայնածաւալ գաւառին վրայ, եթէ սիրայ-
օտար չի մարտնչիք, ակամայ մարտնչու
պիտի ստեղծուինք, և ճակատաբարտուն այն-
քան խիստ ու անողոք է որ անկէ խուսա-
փել հնար չ'է երբէք: Այսու հանգրձ,
պէտք չ'է մտնանք թէ կեանքի յորձանուտ
չըլլանին մէջ կորստեան գաղտնաբարտած
բոլոր գործերը ակամայօրէն ձեռնարկուած
ներն են:

Դարերու հալածման մէջ, մեր ազգային

կեանքի շատ ու արիւնտ հալածուող
ցարդ պահուելու դերադաս յատկութիւնն
ունեցած ըլլալով, ունենալու ենք գործնալ,
նեղակոյս մէջ, կեանքի կուրխն անհամա-
տապէս դերադաս ու խորին, փորձառու-
թիւնը: Արեւմտեան միջոցով հրահրենք
մեր անհատական կեանքի բարոյական զո-
ցումները, և ազգային ամէն տեսակ ձեռ-
նարկներու մէջ, սոսկ գիտողներն ու խօսող-
ները ըլլալու տեղ՝ միջ ու պարկեշտ գոր-
ծողներ ըլլանք: Ամէն բան ազգային իշ-
խանութեան վերջին մարմիններէն սպասե-
լու չ'ենք: Ժողովուրդը ազգային բոլոր
գործերուն մէջ իր որոշ հեղինակութիւնը
պէտք է ունենայ: Ազգային տեսակէտով,
շատ կարեւոր ու կենսական յատկութիւն
մըն է ա՛ս, զոր անպատճառ զարգացնելու
է իր մէջ հայ ժողովուրդը:

Ալ հերիք է անտարբեր ըլլանք . . .
ՆԵՐՈՒԿ
23 Օգոստ. 1903

ՏԵՄԻՒԹԻՒՆՆԵՐ
Ժառանգորդիւն և ծնողական ազդեցութիւն -
Գաղղկի մասին կատարուած խուզարկու-
թիւններ. - Բեհիթի կենսաբանութիւնը -
Անր. - Փօօի կենսաբանութիւնը. - Ինչ-
պէս կարելի է դուր կարելի
անձները:

Այն հանգամանքները որոնց ներքեւ
մարդ աշխարհ կը բերուի, և այն պարագա-
ները որոնք կը նպաստեն անոր շինուելուն ինչ
որ նա արգարե է, - ըլլալն ան կատարուած արան
մը, զիստական մը կամ մարդ մը որ բոլորովին
զուրկ է ու եւէ արժանիքէ՛ն: Են հանգամանքներ
և պարագաներ, որոնք ունին ընդհանուր շա-
հեղանակութիւն, և արժանի են մեր ամենուն ալ
ընթաց յետադուրքանը և շահագրգռութեանը:
Անկորդ է ըսել թէ՛ թէ՛ն մարդս բարոյա-
պէս ազատ և պատասխանատու է մըն է, այ-
սու ամենայնիւ՝ նա յատկ կը բերուի ծննդու-
թեան օրէնքին տակ, և կը կրթուի և անոր
նկարագրերը կը կազմուի ընկերական պարագա-
ներու ներքեւ: Հետեւաբար՝ ան անոր ծնողաց
ազատ կամքը կերպով մը կը լրջ մանկան ճա-
կատագրի: և ասկէ կը հետեւի բոլոր ազգի-
բու, ցեղերու, և գերբնաստաներու ժառանգա-
կան ընդդրոյնները և ճակատապարհը:

Այս իրողութիւնը ինքնին կը ցուցնէ ան-
հուն կարեւորութիւնը և ճանաչողութիւնը
այն պատասխանատուութեան՝ զոր ծնողական
զիջքին մէջ գանձուցիլը կը ստանձնեն հան-
դէպ իրենց զաւակներուն, հանդէպ իրենց պատ-
կանած համայնքին, և հանդէպ ընդհանուր
մարդկութեան՝ իրենց զաւակներուն աշխարհ
բերուելուն, և անոնց ըստ արժանոյն կըր-
թուելուն կենսական խնդիրներուն մէջ:
Անանաբարձները լաւ գիտեն, և ամենայն
զգուշութեամբ իր գործ կը զննեն ընկան օրէնքի
այդ պահանջները որոնցով՝ ստուգուած է թէ՛
կարելի է ընտիր ստեղծել ձի, արջաւ, և կամ
ուրիշ կենդանիներ բուծանել: Սակայն կը վախ-
նանք ըսելու թէ՛ խիստ սակաւթիւ ծնողներ
հազիւ գիտեն ևս լրջութեամբ իր գործ կը զննեն
մանկածութեան ամենամանական օրէնքները
և պէտքերը, և աւելի քիչեր կը հասկնան

իրենց պատասխանատուութեան ճանաչողութիւնը
և ճանաչողութեանը:
Բոլորովին ապացուցուած ճշմարտութիւն
մըն է թէ՛ մեր յուզումները զորսոր կերպով
կազդեն սաղմնային կեանքին վրայ, այնպէս որ
մեր համար խիստ կարեւոր է զոչնախալ վախէ,
զարհուրանքէ, կամ ու եւէ բուռն յուզումներ
պայթումէ մը, և թէ՛ ան պէտք է ունենայ հա-
ճոյական, առողջարար և չափօտր դուրսու-
թիւններ և զբոսանք: Կան պարագաներ յորս
յդի կնկան մը ապուրուութիւնները, փորձառու-
թիւնները, և զբողոքները արտադրած են ան-
հունապէս մեծ արդիւնքներ - արդիւնքներ՝ ու-
րոնք եղած են նպատաւոր կամ աննպատաւ
արդիւնքներու համեմատ՝ որոնք ի գործ
գրուած և շարունակուած են թէ՛ ֆիզիքային,
թէ՛ մտաւորապէս, և թէ՛ բարոյապէս: Արի՛շ
խօսքով՝ մարդկան ապուրուութիւնները՝ ըստ
իրենց տեսակին՝ կարող են ազդել սաղմնային
կեանքին զարգացման, անոր ձեւակերպութեան
և անոր բնաւորութեան վրայ: Գրասուն ման-
րամասնորէն քննելէ և ստուգելէ ետք թէ՛
ինչ գիտութեամբ ապուրուութիւնները կը ձգեն
իրենց գործը մանկանց վրայ՝ ըստ է. Աւե-
լի հեռուն երթալով կը ըսեն թէ՛ մեծ արթնու-
թիւն և հոգածութիւն պէտք է ի գործ գրուի
յդի կնկան վրայ: անիկա պէտք է զերծ պահ-
ուի ուժգին և չափազանց բերկրութիւններէ
և վիշտերէ, և այդ ժամանակամիջոցին մէջ
նա պէտք է յատկապէս մշակէ քաղցրութիւն,
բարեգրգռութիւն և քաղցրարարողութիւն: »

« Տեյի կ'արեւոյս ուղեկցած է վատ-
նելի արեւուրէ մը թէ՛ քաղաքի մը արդիւնքներ
արդէն վարժարան են քաղցկեղի բուն պատ-
ճառը փնտնելու համար կազմուած յանձնա-
խումբին ջանքերը, թէ՛ ևս որոշ մանրամասնու-
թիւնք ևս կը պահուին, սակայն՝ մասին թէ՛
զորձալի մասնախումբին կողմէն հետազո-
տութիւններ ի գործ գնելու համար կարողուած
երեւելի մասնագէտները՝ Տօթթ. Պէշօրա և
Տօթթ. Միւրեյ: Ըրած են գիտ մը որ կրնայ
վերջ ի վերջոյ առաջնորդի քաղցկեղի բուն
պատճառին երևան հանուելուն: Այսպիսի գիտ-
նական յարթմանակի մը արուած խիստ մեծ կա-
րեւորութեան պատճառով՝ առայժմ անկէ ման-
րամասնութեան մասնը խոհեմութեան չի հա-
մարուիր բժշկական շրջանակներուն մէջ: Տեյ
մը խօսք եղած է, կ'ըսէ յիշուլ թէ՛ թէ՛, քաղց-
կեղի կապուածուած պատիւն մասին, և այս
յայտնուած է թէ՛ այս է ինչ որ պիտի յարթուի
ներքէ գտած են: քայց միեւնոյն ատեն ինչ որ
կրեւան կրնայ բերուի այն է թէ՛ խուզարկու-
թիւնք յառաջ բերած են արդիւնքներ՝ որոնք
կը գերազանցեն իրենց կարեւորութեամբ զարդ
ձեռք բերուածները: Տօթթ. Պէշօրա և Տօթթ.
Միւրեյ ինքզինքնին բոլորովին նուիրած են
քաղցկեղի պատճառը խուզարկելու: Իրենց գոր-
ծը մեծաւ մասամբ յատկ կը տարուի փորձեր
կատարելով այն կենդանաց վրայ՝ որոնք նոր
ակտիւ քաղցկեղով վարակուած են: Միեւնոյն
ատեն կրնայ աւելցուել թէ՛ մեծ շահագրգռու-
թիւն ցոյց կը արուի Ռեհիթի ճառագայթներուն
իրբ գործմանական միջոց գործադրութեանը
մէջ: »

Վերջերս ի գործ գրուած խուզարկու-
թիւնաց արդիւնքէն գտանուլ՝ Ռեհիթի կը ներ-
կայացնէ զոչնախալ մը որ անընդհատ զուր-
կուտայ ջիւրութիւն, և անփոփոխ կերպով կը
պահէ բարեխտութեան մը որ 5 կամ 6 ֆա-
րենայի բարձր է իւր շրջանայից բարեխտու-
նութեանը: Հիս ունեյն կերպուած զուր-
թիւն մը՝ կարելի եղածին չափ փոքր գնագու-
ածի մէջ՝ որ թէ՛ մշտնջենաւոր էր և թէ՛ ան-
յողողղ և հաստատուն: Այսպիսի գոյացու-
թեան մը գործնականութիւնը՝ ճարտարա-
ուեստներու մէջ՝ կրնայ ըլլալ անասման, և

